ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

---

**ք. Ծաղկաձոր** **14/04/2021**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5**
**ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ**

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 5 անդամներ:

Բացակա էին՝ Գառնիկ Կարապետյանը, Արման Հակոբյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արթուր Հարությունյանը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գարիկ Բադալյանը**

Լսեցին
***ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի ԹԻՎ 5 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Հաստատել համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 14-ի թիվ 5 հերթական նիստի օրակարգը՝

1. Ծաղկաձոր համայնքի 2021 թվականի առաջին եռամսյակի բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ հաղորդումն ի գիտություն ընդունելու մասին:

2. <<Հայաստանի համայնքների միություն>> իրավաբանական անձանց միությանն անդամակցելու և անդամության վճար վճարելու մասին:

3. <<Ծաղկաձորի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի կազմում ընդգրկվելու համար համայնքի ղեկավարին համաձայնություն տալու մասին:

4. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 74-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

5. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 09-ի թիվ 62-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

6. Համայնքի սեփականություն համարվող հողամասերն աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին:

7. Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

8. 2021 թվականի համար Ծաղկաձոր համայնքի վարչական տարածքում փողոցային լուսավորության հենասյուների օգտագործման տրամադրման ծառայության վճար սահմանելու մասին:

9. <<ՄՏՍ -Հայաստան>> փակ բաժնետիրական ընկերությանը հենասյունների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 35/

Լսեցին

***ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝

Ընդունել ի գիտություն Ծաղկաձոր համայնքի 2021 թվականի բյուջեի կատարման ընթացքի առաջին եռամսյակի վերաբերյալ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 36/

Լսեցին

***<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ>> ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/***

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

1. Անդամակցել <<Հայաստանի համայնքների միություն>> իրավաբանական անձանց միությանը:

2. Վճարել անդամության վճար՝ 100 000 /հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 37/

Լսեցին

***<<ԾԱՂԿԱՁՈՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/ԶԵԿ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի թիվ 113-Ն հրամանով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածով՝

1. Տալ համաձայնություն՝ համայնքի ղեկավար Արթուր Հարությունյանին <<Ծաղկաձորի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի կազմում ընդգրկվելու համար:
2. Ուժը կորցրած ճանաչել Ծաղկաձոր համայնքի ավագանու 2019 թվականի փետրվարի 28-ի <<Պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի կազմում ընդգրկվելու համար համայնքի ղեկավարին համաձայնություն տալու մասին>> թիվ 19 որոշումը:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 38/

Լսեցին

***ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 74-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/ԶԵԿ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով և 34-րդ հոդվածով՝

1. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի <<Ծաղկաձոր համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին>> թիվ 74-Ն որոշման 1-6 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն 1-6 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 39-Ն/

Լսեցին

***ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 09-Ի ԹԻՎ 62-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/ՋԵԿ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ինմասով,

1. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 09-ի <<Տեղական տուրքերի և վճարների թվականի դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 62-Ն որոշման թիվ 2021 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները

1) 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

| | | |
|---|---|---|
| **4.** | համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 200 000 |

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին և 4.2-րդ կետերով.

| | | |
|---|---|---|
| **4.1.** | համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 200 000 |
| **4.2.** | համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 200 000 |

3) 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

| | | |
|---|---|---|
| **5.** | համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 60 000 |

4) 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

| | | |
|---|---|---|
| **10.** | համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար ՝ | |

5) 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

| | | |
|---|---|---|
| **13** | Ծաղկաձոր համայնքի խորհրդանիշները (զինանշանը, անվանումը) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար՝ օրացուցային տարվա համար՝ | 100 000 |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 40-Ն/

Լսեցին

***ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

Աճուրդային կարգով օտարել համայնքային սեփականություն համարվող հետևյալ հողամասերը՝

| N | Հողամասի հասցեն | Չափը | Նպատակային և գործառնական նշանակությունը | Կադաստրային ծածկագիր | Մեկնարկային գինը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Սարալանջ փողոց, թիվ 78/2 | 0,10 հա | Հատուկ պահպանվող, հանգստի | 07-005-0022-0517 | 10 513 800 < < դրամ |
| 2. | Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Սարալանջ փո | 0,1 հա | Հատուկ պահպանվո | 07-005-0022- | 10 513 800 < |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ղոց, թիվ 56/1 | | ղ, հանգստի | 0539 | < դրամ |
| 3. | Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Ամառանոցայի ն փողոց, թիվ 5/1 | 0,1 հա | Հատուկ պահպանվո ղ, հանգստի | 07-005-0017-0030 | 16 176 600 < < դրամ |
| 4. | Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, ԱվետիքԻսահ ակյան փողոց, թիվ 19/3 | 0,05 հա | Հատուկ պահպանվող, հանգստի | 07-005-0021-0123 | 8 088 300 << դրամ |
| 5. | Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Նոր թաղա մաս 4-րդ փողոց, թիվ 48 | 0,06 հա | Բնակավայրե րի, բնակելի կառուցապա տման | 07-005-0016-0152 | 6 308 280 << դրամ |
| 6. | Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Օլիմպիակա ն փողոց, թիվ 14/1 | 0,5 հա | Հատուկ պահպանվող, հանգստի | 07-005-0026-0670 | 80 883 000 << դրամ |
| 7. | Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Նոր թաղամ աս 4-րդ փողոց, թիվ 11 | 0,16 հա | Բնակավայրե րի, խառը կառուցապա տման | 07-005-0016-0168 | 16 822 080 << դրամ |
| 8. | Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Մեր Մկրտչյ ան փողոց, թիվ 41 | 0,3 հա | Հատուկ պահպանվող, հանգստի | 07-005-0020-0006 | 48 529 800 << դրամ |
| 9. | Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Տանձաղբյուր փողոց, թիվ 6/8 | 0,15 հա | Հատուկ պահպանվող, հանգստի | 07-005-0023-0268 | 15 770 700 << դրամ |
| 10. | Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Պահլավունյաց փողոց, թիվ 73 | 3,059125 հա | Հատուկ պահպանվող, հանգստի | 07-005-0016-0199 | 32 1630 284 << դրամ |
| 11. | Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, ԳՄՀթաղամա ս, թիվ 90/1 | 0,1447 հա | Հատուկ պահպանվող, հանգստի | 07-005-0026-0642 | 23 407 540 << դրամ |
| 12. | Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Սարալանջի 1 փողոց, թիվ 8 | 0,022 հա | Հատուկ պահպանվող, հանգստի | 07-005-0001-0025 | 2 313 036 << դրամ |
| 13. | Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Նոր թաղամաս 4-րդ փողոց, թիվ 2/4 | 0,06 հա | Բնակավայրե րի, այլ | 07-005-0016-0215 | 6 308 280 << դրամ |
| 14. | Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Նոր թաղամաս 4- | 0,04 հա | Բնակավայրե րի, այլ | 07-005-0016-0213 | 4 205 520 << դրամ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ոդ փողոց, թիվ 2/3 | | | | |
| 15. | Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Նոր թաղամաս 4-ոդ փողոց, թիվ 2/2 | 0,043 հա | Բնակավայրերի, այլ | 07-005-0016-0214 | 4 520 934 << դրամ |
| 16. | Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Պահլավունյաց փողոց, թիվ 73/2 | 0,2 հա | Հատուկ պահպանվող, հանգստի | 07-005-0016-0171 | 21 027 600 << դրամ |
| 17. | Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Սարալանջ փողոց, թիվ 80/ | 0,2 հա | Հատուկ պահպանվող, հանգստի | 07-005-0016-0192 | 21 027 600 << դրամ |
| 18. | Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Սարալանջ 6-ոդ փակուղի, թիվ 2/1 | 0,06 հա | Հատուկ պահպանվող, հանգստի | 07-005-0022-0535 | 6 308 280 << դրամ |
| 19. | Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Սարալանջ 6-ոդ փակուղի, թիվ 4/1 | 0,06 հա | Հատուկ պահպանվող, հանգստի | 07-005-0022-0537 | 6 308 280 << դրամ |
| 20. | Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Մայիսյան փողոց, թիվ 25/1 | 0,1332 հա | Բնակավայրերի, Բնակելի կառուցապատման | 07-005-0008-0262 | 21 547 231 << դրամ |
| 21. | Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Սարալանջ փողոց, թիվ 56/2 | 0,1 հա | Հատուկ պահպանվող, հանգստի | 07-005-0022-0541 | 10 513 800 << դրամ |
| 22. | Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Սարալանջ 6-ոդ փակուղի, թիվ 2 | 0,08 հա | Հատուկ պահպանվող, հանգստի | 07-005-0022-0536 | 8 411 040 << դրամ |
| 22. | Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փողոց, թիվ 16/4 | 0,09 հա | Հատուկ պահպանվող, հանգստի | 07-005-0023-0270 | 9 462 420 << դրամ |
| 24. | Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Սարալանջ 3-ոդ փակուղի, թիվ 6 | 0,26 հա | Հատուկ պահպանվող, հանգստի | 07-005-0023-0203 | 27 335 880 << դրամ |
| 25. | Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Սարալանջ 2-ոդ փակուղի, թիվ 13 | 0,08 հա | Հատուկ պահպանվող, հանգստի | 07-005-0023-0060 | 8 411 040 << դրամ |
| 26. | Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Ավետիք Իսահակյան փակուղի, թիվ 16 | 0,0898 հա | Հատուկ պահպանվող, հանգստի | 07-005-0033-0003 | 14 526 587 << դրամ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 27. | Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Սարալանջ փողոց, թիվ 42 | 0,025 հա | Հատուկ պահպանվող, հանգստի | 07-005-0022-0545 | 2 628 450 << դրամ |
| 28. | Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Պահլավունյաց փողոց, թիվ 82/1 | 0,152 հա | Հատուկ պահպանվող, հանգստի | 07-005-0020-0124 | 24 588 432 << դրամ |
| 29. | Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փողոց, թիվ 40/11 | 0,2623 հա | Հատուկ պահպանվող, հանգստի | 07-005-0030-0084 | 42 431 223 << դրամ |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 41/

Լսեցին

***ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/***

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսի 1-ի <<Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին>> թիվ 186-Ն հրամանի հավելվածի 9-րդ կետի 5-րդ ենթակետով՝

1.Ծաղկաձոր համայնք, Տանձաղբյուր փողոց թիվ 34/3 հասցեում գտնվող, 0,03935 հա մակերեսով հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 42/

Լսեցին

***2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԵՆԱՍՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով

2021 թվականի համար Ծաղկաձոր համայնքի վարչական տարածքում փողոցային լուսավորության հենասյուների օգտագործման տրամադրման ծառայության վճար սահմանել՝ ամսական 400 (չորս հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ յուրաքանչյուր հենասյան համար:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 43/

Լսեցին

***<<ՄՏՍ- ՀԱՅԱՍՏԱՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԵՆԱՍՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/***

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 14-ի թիվ 43 որոշումը՝

<<ՄՏՍ- Հայաստան>> փակ բաժնետիրական ընկերությանը թույլատրել օգտագործել Ծաղկաձոր համայնքի, Մեր Մկրտչյան փողոցում գտնվող 67 հենասյուներից և Ծաղկաձոր համայնքի, Եղիշե Չարենց փողոցում գտնվող 11 հենասյուներից՝ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց սահմանված վճարի դիմաց:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 44/

Ավագանու անդամներ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՐՄԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐՄԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ*

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Նիստն արձանագրեց՝* Գարիկ Բաղալյանը